ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

#

11.08.2016թ.
292-ի 4

ՀՀ ճանապարհային ոստիկանության
պետ պարոն Արմեն Հակոբյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հակոբյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ կարգավիճակ ունի Ճանապարհային ոստիկանության տեսանկարահանման միջոցով հայտնաբերված խախտումների արձանագրման կենտրոնը (առանձնացված ստորաբաժանում, տարածքային ստորաբաժանում, ՃՈ վարչական մաս (բաժին, բաժանմունք, վարչություն և այլն), "Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ-ի մաս և այլն),
2. Ո՞ր իրավական ակտով (կամ պայմանագրով) է սահմանված տեսանկարահանման միջոցով հայտնաբերված խախտումների արձանագրման կենտրոնի կարգավիճակը, գործունեությունը և աշխատակազմը: Խնդրում ենք տրամադրել այդ իրավական ակտի (կամ պայմանագրի) պատճենը,
3. Ի՞նչ կարգավիճակ ունեն Ճանապարհային ոստիկանության տեսանկարահանման միջոցով հայտնաբերված խախտումների արձանագրման կենտրոնի տեսուչները և ավագ տեսուչները (ՃՈ տարածքային ստորաբաժանման ծառայողներ, ՃՈ վարչական մասի ծառայողներ, "Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ-ի աշխատակիցներ և այլն),
4. Ի՞նչ միջոցներով է ֆինանսավորվում Ճանապարհային ոստիկանության տեսանկարահանման միջոցով հայտնաբերված խախտումների արձանագրման կենտրոնի գործունեությունը՝ ներառյալ անհրաժեշտ տեխնիկական միջոցները (բյուջե, արտաբյուջե, "Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ և այլն),
5. Ի՞նչ միջոցներից են վարձատրվում Ճանապարհային ոստիկանության տեսանկարահանման միջոցով հայտնաբերված խախտումների արձանագրման կենտրոնի աշխատակիցները (բյուջե, արտաբյուջե, "Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ և այլն),
6. Խնդրում ենք տրամադրել Ճանապարհային ոստիկանության տեսանկարահանման միջոցով հայտնաբերված խախտումների արձանագրման կենտրոնի տեսուչների և ավագ տեսուչների հետ կնքվող աշխատանքային պայմանագրի պատճեն (կամ նմուշ)՝ պատճենի դեպքում առանց աշխատակցի անձնական տվյալների՝ դրանք ծածկելով, սևացնելով կամ ջնջելով:

Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան